

# ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

(Մեր սեփ. քղրակցեմ)

## ՂԱՄԱԶԳԱՅԻՆ ՄԵԾ ՅՈՐԲԵԼԵԱՆԸ

### Վ Ա Ն Ի Մ Է Ջ

Վան, Հոկ. 17

Գրերու 1500 և տպագրութեան 400 ամիսոյ համազգային յորելեաննե-  
րէն անմասն չմնաց Վանը: Դեռ մէկ  
տարի առաջ յանձնախումբ մը կազ-  
մուած էր, որ սակայն գործէ հեռանա-  
լով այս տարի գործի սկսելու պատիւը  
մնաց կեդրոնական Վարժարանի ու-  
սուցչութեան, որու հրաւերով Սեպ.  
Յին Վանի ուսուցչութիւնը հաւաք-  
ուելով ընտրեց յանձնախումբ մը, որ  
իրեն յանձնուած գործը կազմակերպե-  
լով որոշեց Հոկտ. 12 և 13ին երեք  
հանդէսներ տալ, երկուքը բոլոր  
գպորոցներու աշակերտներուն համար  
երկու անգամով և մէկը հասարակու-  
թեան համար:

Հոկտ. 12ը Վանի աշակերտութեան  
խանդավառութեան օրն էր: Առա-  
ւօտեան ժամը կին Այգեստանին ամէն  
կողմերէն բոլոր նախակրթարաններու  
(Ա-Ե) երկսեռ աշակերտները պսակ-  
ներով ու ձողիկներով կը զխմեն զէ-  
պի հանդիսավայրը—Ամերիկեան ժո-  
ղովարանը, որ քիչ առնէն կը լեց-  
ուի մօտ 1500 մանուկներով: Մէկ  
ժամ տեւող հանդէսին մէջ արտասա-  
նութիւններ, երգեր եղան և բանա-  
խօսութիւններ Պ. Պ. Ե. Ռչտուռիէ և  
Կ. Աճէմիանէ:

Նոյն օրը, ժամը Տին դարձեալ  
նոյն պատկազարդ գնացքը փողոցնե-  
րու մէջէն, և մօտ 1500 բարձրագոյն  
կտրգերու երկսեռ աշակերտութիւնը  
հազիւ հազ տեղ կը գտնէ: Բանախօ-  
սեցին Պ. Պ. Ե. Կուլոյլեան, Ս. Լե-  
ւոնեան, Հ. Սօրօզեան, երգուեցան  
երգեր, եղան արտասանութիւններ  
ևն.: Հանդէսը տեւեց 2 1/2 ժամ: Վա-  
նի աշակերտութիւնը առաջին անգամ  
էր որ քով քովի կուգար և այդ ալ  
այսպիսի համազգային տօնի մը առ-  
թիւ:

Հոկտ. 13ին նոյնտեղը տեղի ունե-  
ցաւ ժողովրդական հանդէսը 2 զրշ.

մուտքով: Նախորդ օրուան պէս որա-  
հին ճակատը զարգարուած էր տա-  
նէ աւելի սրահներով, գծագրագէտ  
Վ. Ախիկեանի յատկապէս գծագրած  
Ս. Մեարտի և Ս. Սահակի մեծագիր  
պատկերներով, աւազ և կրտսեր  
թարգմանիչներու ու օրուան տօնի ա-  
նուեններով: Հանդէսը սկսաւ ժամը  
Տին տեւելով 3 1/2 ժամ: Բանախօսեցին  
Պ. Պ. Ա. Սօլախեան (տառերու գիւ-  
տը), Մ. Թէրլէմէզեան (տպագրու-  
թեան և թերթի սկիզբը հայերուս մէջ),  
Յ. Կուլոյլեան (Վանի կրթական և  
գրական կեանքի վերածնունդը) և  
Մ. Մինասեան (լեզուի ու Գրականու-  
թեան արժէքն ու զիրը): Արտասան-  
ուեցան Չօպանեանի «Գեղօն Հայ Լեզ-  
ուի»ն, Շահազիզի «Ազգային վիճակը»,  
Ս. Նազարեանի «Մայրենի Լեզու»ն,  
Յովհաննէսեանի «Անգրագէտը» և այլն:  
Երգուեցան քառաձայն երգեր՝ երա-  
ժշտագէտ Պ. Պ. Ս. Փախչանեանի և  
Ս. Պոստիքանեանի ղեկավարութեամբ:  
Միւսը Էջըր Չութակի ընկերակցու-  
թեամբ երգեց «Լուեց ամպեր»ը և «Տէր  
կեցո»ն: Ժողովուրդը մեկնեցաւ զո՛ր  
տպաւորութեան տակ: Սակայն ափսոս  
որ ուսուցչական ձեռնարկ եղող այս  
հանդէսները զուտ քաղաքի մէջ ամ-  
փոփուեցան, Վասպուրա՞անի գաւառ-  
ները չ'արձագանդեցին այս տօնին,  
կամ թէ գաւառներէն ներկայացուցիչ-  
ներ չ'ի կանչուեցան:

Տօնին առթիւ ուսուցչական յանձ-  
նախումբը սկզբէն որոշած էր նաև  
հանդանակութիւն մը բանալ, որու  
համար Հոկտ. 6ին ազգային, կրթա-  
կան ևն. 50 հաստատութեանց ներ-  
կայացուցիչներէ կազմուած ժողովի մը  
մէջ ընտրուեցաւ 7 անդամներէ բազ-  
կացած խառն յանձնախումբ մը, որ  
հանդէսէն անմիջապէս վերջ գործի  
սկսեց, թէև ջնջին սակ մը որոշելով  
(առաւելագոյնը 20 զրշ.): Հանդանա-  
կութեան մեծ եռանդով մը կը մաս-  
նակցի նաև աշակերտութիւնը:

Հաւաքուելիք դրամներու գումարը  
պիտի տրամադրուի Պատրիարքարանի  
առաջարկելիք ու է Համազգային  
Ֆօնտին, կամ հակառակ պարագային  
պիտի յատկացուի Վանի տեղական ու  
է կրթական ձեռնարկի մը:

Ա. ՀՐԱՀԱՏ